

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ՊԵՏՐՈՒ ԳՐՈԶԱՅԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌԻՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ

Մամուլի և ռադիոյի միջոցով լսեցինք երեկոյեն հասած ուրախարիր լուրը, որ Հայոց Ազգային-եկեղեցական ժողովը, գումարված սույն թվի սեպտեմբերի 30-ին, Ձեզ ընտրել է Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Վազգեն Եպիսկոպոս Պալճյանը, Ռումինահայ թեմի առաջնորդը, բարձրացավ այդպիսով իր եկեղեցու եվրապետության ամենաբարձր աստիճանի վրա, և այս պարագան ուրախացնում է նաև մեզ, ծանոթ լինելով երիտասարդ Հովվապետի արժանիքներին, որ առանց պատրիարքական տարիքի հասած լինելու, կոչված է այժմ, Ազգային-եկեղեցական ժողովի վստահությամբ, ստանձնելու Հայաստանյայց եկեղեցու գերագույն ղեկավարությունը:

Ներկայացնում եմ նաև իմ կողմից Ձերդ Սրբության ամենաջերմ մաղթանքներն առողջության և աշխատանքի ուժի, որպեսզի կատարելագույն չափով հաջողություն ունենաք Ձեր առաքելության մեջ, Ձեր աշխատանքի ասպարեզը ավելի և ավելի ընդարձակելով նաև ի խնդիր խաղաղության մեծ դատի պաշտպանության, քարոզելով բարի հասկացողություն և եղբայրություն բոլոր խաղաղասեր ժողովուրդների միջև:

Մեր վաղեմի հարգանքի զգացումներով Ձերդ Սրբության՝

ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝
ԴՈԿՏ. ՊԵՏՐՈՒ ԳՐՈԶԱ.

ՎԵՀԱՓԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴՈԿՏ. ՊԵՏՐՈՒ ԳՐՈԶԱՅԻՆ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Ամենախորին հուզմունքով կարդացինք Ձեր ողջույնի խոսքը Մեր ընտրության առթիվ:

Հազարամյա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և սուրբգրական Արարատի ստորոտից ընդունեցեք Մեր սիրո և երախտագիտության ջերմ ողջույնը ուղղված Ձեզ, ռումին խաղաղասեր ժողովրդին ու Ռումինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի Նախագահության, ինչպես և բարեխնամ կառավարության:

Մնամք միշտ աղոթող առ Աստված Ձեր առողջության ու երջանկության համար, վասն առաջադիմության և բարգավաճության Ռումին Հայրենիքի և վասն խաղաղության ու բարեկամության ժողովուրդների միջև:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ